

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՎԱՐԴԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆ**

**ԺԹ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԳՐԱՎՈՐ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵԻԱՎՈՐՄԱՆ ԴԵՐԸ ԱՐԵՒԵԼՅԱՆ  
ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ԷԹՆՈՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**ԵՐԵՒԱՆ 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պ.գ.դ. Ա. Հ. Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ. պրոֆ. Վ. Գ. Թունյան  
պ.գ.թ. Հ. Ս. Խառատյան

Առաջատար կազմակերպություն՝

Երեւանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 13-ին, ժամը 15:00 -ին ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երեւան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտքարտուղար՝

պ.գ.թ. Գ.Ա. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Հետազոտության թեմայի արդիականությունը

Ընտրված թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է ժամանակակից պատմագիտության մեջ ադրբեջանցի էթնոսի ծագման շուրջ իրարամերժ տեսակետների եւ հաճախ հանդիպող ակնհայտ զեղծարարությունների առկայությամբ: Ադրբեջանական պատմագրությունը խորհրդային եւ առավելապես հետխորհրդային տարիներին առաջ է քաշում թեզեր, որոնց համաձայն՝ արդի ադրբեջանցի էթնոսը վերջնականապես ձեւավորվել է դեռեւս ԺԳ-ԺԴ դարերում, իսկ նրա նախնիները, որոնց մի մասին նույնիսկ թյուրքական ծագում է վերագրվում, եղել են անտիկ Ատրպատական-Մարաստանի եւ Ադուանք-Ալբանիայի բնակիչները: Որպես երկրամասի բնիկ կամ անտիկ շրջանում գաղթած թյուրքեր են ներկայացվում Առաջավոր Ասիա արշաված եւ տարացել միավորումներ հանդիսացած հոները, սավիրները, խազարները, որոնք հայտնի աղբյուրների եւ ակադեմիական պատմագիտական վերլուծությունների համաձայն Արեւելյան Այսրկովկասի էթնիկ պատկերի վրա էական ազդեցություն չեն թողել<sup>1</sup>: Ադրբեջանում կեղծ ակադեմիական մակարդակով փորձեր են արվում նաեւ ժամանակակից ադրբեջաներեն լեզվի եւ գրականության արմատները հասցնել մինչեւ Հին աշխարհ<sup>2</sup>: Իբրեւ ադրբեջանական է ներկայացվում նաեւ Առաջավոր Ասիայի միջնադարյան ամբողջ թյուրքալեզու եւ Արեւելյան Այսրկովկասի իրանալեզու գրականությունը: Նման թեզերի առաջ քաշումն ու տարածումը նպատակ է հետապնդում հնարավորինս վաղեմիացնել Արեւելյան Այսրկովկասում թյուրքական տարրի գոյությունը, ավելին՝ նաեւ այն ներկայացնել որպես բնիկ:

Բավական տարածված է նաեւ մեկ այլ միտում՝ միմյանց հետ կապել կամ նույնացնել Իրանական Ատրպատական նահանգի եւ Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոսների շրջանում ընթացած էթնիկական վերափոխման գործընթացները եւ տվյալ էթնիկ խմբերին ներկայացնել որպես մեկ ամբողջական էթնոս: Այս մոտեցումը, ցավոք, առկա է ոչ միայն ադրբեջանցի, այլեւ մի շարք ոռու եւ արեւմտյան ուսումնասիրողների մոտ, ովքեր միգուցե ինչ-որ չափով հետապնդում են քաղաքական շահեր ու նպատակներ:

Վերոնշյալ միտումներից ելնելով՝ արդիական ու հրատապ է դառնում հասկանալ եւ պարզել, թե երբ է իրականում սկսվել Արեւելյան Այսրկովկասի

---

<sup>1</sup> Տե՛ս The history of al-Tabari, Vol. 5, translated and annotated by C.E. Bosworth, State University of New York Press, 1999, p. 150-151; М.И. Артамонов, История хазар, Ленинград, 1962, с. 126-127, 155.

<sup>2</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս В.Г. Тунян, Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ереван, 2013, с. 22-23.

թյուրքախոս հանրույթի էթնոհամախմբման գործընթացը, եւ ինչ դեր է կատարել այդ գործընթացում երկրամասի պատմա-աշխարհագրական սահմանների հետ անմիջական կապ ունեցած կայուն թյուրքալեզու գրավոր մշակույթն ու գրական լեզուն:

### **Ատենախոսության նպատակը եւ խնդիրները**

Ատենախոսության նպատակն է՝ ուսումնասիրել ԺԹ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասում ձեւավորված թյուրքալեզու գրավոր մշակույթի ազդեցությունը տեղի մահմեդական բնակչության ինքնագիտակցության եւ էթնոհամախմբման վրա:

#### **Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը խնդիր ունի.**

- Ուսումնասիրել ռուսական տիրապետության հաստատումից հետո Արեւելյան Այսրկովկասի մահմեդական բազմէթնիկ բնակչության համար ստեղծված նոր իրավիճակը, երբ նրա բաղադրիչների էթնիկ զարգացումն սկսեց ընթանալ որակապես նոր պայմաններում, այն է՝ աշխարհագրորեն մեկուսացած երկրամասի սահմաններում: Վերլուծել Այսրկովկասում ցարական ազգային քաղաքականության ազդեցությունը թյուրքալեզու բնակչության համախմբման վրա:

- Ներկայացնել ԺԹ դ. երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնիկ պատկերը, պարզել թյուրքախոս բնակչության քանակական եւ քաղաքական կշիռը:

- Ուսումնասիրել ռուսական տիրապետության հաստատումից հետո պարսկերեն լեզվի գերակա դիրքերի թուլացումը եւ առավելապես Միրզա Ֆաթալի Ախունդովի ջանքերով թյուրքերեն գրավոր լեզվի եւ գրականության սկզբնավորումը:

- Ներկայացնել ռուսական կրթական եւ մշակութային միջավայրում հասունացած նոր թյուրքախոս մտավորականության գրական եւ հանրային գործունեությունը, նրա շրջանում ձեւավորված հավաքականության եւ էթնիկ ինքնագիտակցության նախնական դրսեւորումները:

- Պարզաբանել ԺԹ դ. վերջում սաղմնավորված պանթյուրքիզմի գաղափարախոսության ազդեցությունը նոր թյուրքալեզու մտավորականության գաղափարների եւ ինքնության փնտրտուքի վրա:

- Լուսաբանել Արեւելյան Այսրկովկասում նոր երեսույթ դարձած թյուրքալեզու մամուլի ձեւավորումը, ներկայացնել մահմեդական բնակչության շրջանում թյուրքալեզու պարբերականների ունեցած դերը:

- Մանրամասն վերլուծել թյուրքալեզու մամուլում էթնիկ ինքնագիտակցության ամենավաղ դրսեւորումները, բացահայտել «ադրբեջանցի» արհեստական ինքնանունն առաջ քաշելու դրդապատճառները:

## **Ատենախոսության գիտական նորույթը**

- Ատենախոսության մեջ ցույց է տրվել, որ Արեւելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդական բնակչության էթնոհամախմբման – էթնոձեռնավորման գործընթացը սկզբնավորվել է ԺԹ դ. երկրորդ կեսին (1850-1860-ական թթ.): Տվյալ գործընթացի խթան են հանդիսացել դարասկզբին ռուսական տիրապետության հաստատումից հետո Այսրկովկասի մահմեդական բազմացեղ բնակչության համար ստեղծված որակապես նոր պայմանները (աշխարհագրորեն մեկուսացած երկրամասի սահմաններում), իսկ վճռական դերը խաղացել է երկրամասում թյուրքալեզու գրավոր մշակույթի ձեռավորումը, որը հովանավորվում էր նաեւ ցարական իշխանության կողմից: Վերոնշյալի արդյունքում ԺԹ դ. վերջում մեծամասամբ նստակյաց դարձած, սեփական նորաստեղծ գրական լեզու եւ մամուլ ունեցող թյուրքախոսները (Այսրկովկասի թաթարներ) արդեն ոչ թե ցեղային ինքնագիտակցությամբ կիսաքոչվոր հասարակություն էին, այլ միասնական ինքնանվանում չունեցող մետաէթնո-լեզվական հանրույթ, որը միջանկյալ վիճակ էր վերջնական էթնոս դառնալու ճանապարհին:
- Թյուրքալեզու մետաէթնո-լեզվական հանրույթի առավել զարգացած խավը հանդիսացող նոր մտավորականության կամ ընտրախավի (էլիտայի) մոտ ձեռնավորվել էր էթնիկ ինքնագիտակցություն՝ հիմնված թյուրքության գաղափարի եւ թյուրքերեն լեզվի վրա: Այդ ընտրախավը դարերով արմատավորված կրոնական (մահմեդական) եւ ցեղային (փաղար, շահսեան, դաջար եւն) ինքնագիտակցությունը մերժող նոր՝ թյուրքական գիտակցությունը քարոզում ու տարածում էր թյուրքերեն գրականության եւ մամուլի միջոցով: ԺԹ դ. երկրորդ կեսին ընթացած այս գործընթացը դարձել է երկրամասի թյուրքախոսների էթնոգոյացման առաջին փուլը, որի արդյունքների հիմքի վրա հետեւել է երկրորդը՝ իր սկիզբն առնելով 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումներով:
- Արեւելյան Այսրկովկասի եւ նրա թյուրքախոս մահմեդական բնակչության անվանակոչման համար «Ադրբեջան» եւ «ադրբեջանցի» արհեստական եզրույթները կիրառելու՝ Ի դարի երեւույթ համարվող միտումը սաղմնավորվել է ԺԹ դ. վերջին երկու տասնամյակներում: Դա տեղի է ունեցել հիմնականում նոր ծնվող պանթյուրքիզմի եւ ռուսական պաշտոնեական ու ազգայնական շրջանակների ազդեցության ներքո:

## **Ատենախոսության ժամանակագրական շրջանակները**

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է ԺԹ դարի երկրորդ կեսը: Տվյալ ընտրությունը պայմանավորված է 1850-ական թվականներին թյուրքալեզու գրավոր մշակույթի սկզբնավորումով: Այնուամենայնիվ նպատակահարմար ենք գտել մեկ ենթազվիտով ներկայացնել նաեւ Արեւելյան Այ-

սրկովկասում թյուրքական տարրի պատմությունն ու ցեղային կազմը: Որպես ուսումնասիրության ժամանակային առավելագույն սահմանագիծ հաստատել ենք 1905 թվականը, քանի որ, մեր կարծիքով՝ տվյալ տարով Արեւելյան Այսրկովկասի էթնոճեավորման գործընթացում սկսվել է հաջորդ՝ ավելի ինտենսիվ փուլը, որը կապված է ամբողջ Ռուսական կայսրությունը համակած հեղափոխական շարժման եւ հայ-թաթարական բախումների հետ:

### **Ատենախոսության մեթոդաբանական հենքը**

Աշխատանքի հիմքում ընկած են տարատեսակ աղբյուրների եւ գրականության պատմաքննական եւ պատմավերլուծական մեթոդները:

### **Ատենախոսության կիրառական նշանակությունը**

Տվյալ աշխատանքը կարող է կիրառական նշանակություն ունենալ ոչ միայն ԺԹ դարի Այսրկովկասի, այլեւ ժամանակակից Ադրբեջանի պատմության առանձին հիմնահարցերի ուսումնասիրության համար, քանի որ այն լույս է սփռում նաեւ ադրբեջանցի էթնոսի ծագման ոչ վաղ անցյալի պատմության վրա: Ատենախոսության մեջ արված եզրակացությունները կարող են հիմք դառնալ նոր՝ ժամանակագրական առումով մեր ատենախոսության շարունակություն հանդիսացող պատմագիտական եւ քաղաքագիտական հետազոտությունների համար: Դրանց հիման վրա կարող են նաեւ կազմվել նոր կովկասագիտական գիտա-մեթոդական եւ ուսումնական ձեռնարկներ:

### **Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը**

Ուսումնասիրության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակված գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել եւ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արեւելքի բաժնի կողմից:

### **Աղբյուրների եւ գրականության տեսություն**

Ատենախոսության մեջ օգտագործված աղբյուրները հիմնականում ներկայացված են ԺԹ դ. երկրորդ կեսի ռուսական պետական վիճակագրական տվյալներով, ԺԹ դարի ռուս ազգագրագետների ձեռագիր ու տպագիր նկարագրություններով, նույն ժամանակաշրջանում լույս տեսած թյուրքերեն, ռուսերեն եւ հայերեն մամուլի հրապարակումներով:

Երկրամասի էթնիկ պատկերը ներկայացնելու համար նախ եւ առաջ օգտվել ենք ԺԹ դ. երկրորդ կեսին ռուսական իշխանությունների անցկացրած մարդահամարների տվյալներից: Մասնավորապես՝ 1887 թ. «Кавказский календарь»-ում զետեղված հավելվածը պատկերացում է տալիս ամբողջ Այսրկովկա-

սի կրոնադավանական պատկերի վերաբերյալ<sup>3</sup>: Մեզ համար հատկապես օգտակար են եղել դրանում տեղ գտած Բաքվի, Ելիզավետպոլի նահանգներում եւ Զաքաթալայի շրջանում շիա եւ սուննի մահմեդականների թվական տվյալները 1884 թ. դրությամբ: Հանդեսի նույն տարվա համարում ներկայացված են նաեւ 1871-1874 թթ. ընթացքում ամբողջ Կովկասում անցկացված կամերալ մարդահամարի վիճակագրական տվյալները: Դրանց միջոցով կարելի է պատկերացում կազմել Արեւելյան Այսրկովկասի մահմեդական էթնիկ խմբերի՝ թյուրքախոսների, կովկասապետո ժողովուրդների, թաթերի, թալիշների քանակական պատկերի վերաբերյալ<sup>4</sup>: Մեծապես օգտվել ենք նաեւ 1886 թ. ընտանեկան ցուցակների հիման վրա 1893 թ. հրատարակված «Այսրկովկասի մարզի բնակչության վիճակագրական տվյալների հավաքածոյից», որը ոչ միայն մանրամասն տվյալներ է հաղորդում երկրամասի էթնիկ կազմի մասին, այլեւ հարուստ նյութ է պարունակում Արեւելյան Այսրկովկասի տեղանունների եւ թյուրքական ցեղերի միջեւ կապը բացահայտելու համար<sup>5</sup>: Էապես հենց 1886 թ. վիճակագրական տվյալների վրա է հիմնված նաեւ «Ռուսական կայսրությունում բնակվող ժողովուրդների այբբենական ցուցակ»-ը<sup>6</sup>: ԺԹ դ. վերջին Արեւելյան Այսրկովկասի ազգագրական պատկերը փորձել ենք ստանալ 1897 թ. Ռուսաստանի կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի՝ բնակչությունն ըստ մայրենի լեզվի<sup>7</sup> եւ դավանանքի<sup>8</sup> բաժինների հիման վրա:

ԺԹ դ. երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասում բնակվող ազգերի եւ էթնիկ խմբերի նկարագրությունը կազմելու համար օգտվել ենք նույն դարի ռուս ճանաչված ազգագրագետներ եւ լեզվաբաններ Ն. Զեյդլիցի, Լ. Զագուրսկու, Պ. Ուլարի աշխատություններից<sup>9</sup>:

<sup>3</sup> Число церквей и прихожан православных, армяно-григорианских и магометанских, по сведениям 1884 г., – Кавказский календарь на 1887 год, с. 222.

<sup>4</sup> Распределение народностей, населяющих Кавказ, по губерниям и областям Кавказа, – Кавказский календарь на 1887 год, с. 220.

<sup>5</sup> Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольская губерния, Тифлис, 1893.

<sup>6</sup> Алфавитный список народов, обитающих в Российской Империи, Издание канцелярии кабинета министров, СПб., 1895.

<sup>7</sup> Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Наличное население обоого пола по уездам, с указанием числа лиц преобладающих родных языков, Вып. 7, 1905 г.

<sup>8</sup> Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Наличное население обоого пола по уездам и городам, с указанием преобладающих вероисповеданий и главнейших сословий, Вып. 6, 1905 г.

<sup>9</sup> **Н.К. Зейдлиц**, Этнографический обзор Бакинской губернии (приложение к Кавказскому календарю на 1871 г.), с. 46-67; Списки населенных мест Российской империи по Кавказскому краю, Бакинская губерния, Составлено **Н. Зейдлицем**, Тифлис, 1870; **Л.П. Загурский**, Этнологическая классификация кавказских народов (Извлечено из рукописного труда), Приложение к Кавказскому календарю на 1888 г.; **П.К. Услар**, Этнография Кавказа. Языкознание, т. VI. Кюринский язык, Тифлис, 1896.

Արեւելյան Այսրկովկասում հաստատված թյուրքական ցեղերի ծագման, թվաքանակի եւ տեղաբաշխման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ ենք քաղել ինչպես միջնադարյան մահմեդական պատմիչներ Իբն ալ-Ասիրի, Ռաշիդ ալ-Դիհնի, այնպես էլ ժԹ եւ Ի դարի հեղինակներից: Մասնավորապես՝ Ա. Բաքիխանովի «Գյուլիստան Իրամ» երկը հիմնական գծերով ներկայացնում է երկրամասի պատմությունը մինչեւ ռուսական նվաճումը՝ նաեւ լուսաբանելով թյուրքական ցեղերի հետ կապված կարեւոր պատմական անցքեր: ԺԱ-ԺԲ դարերում օղուզական եւ թուրքմենական ցեղերի արշավանքներն ու սելջուկյան պետության քաղաքականությունն իրենց աշխատություններում լուսաբանել են Ս. Աղաջանովը, Վ. Մինորսկին<sup>10</sup>: Թյուրքական ցեղերի տեղաբաշխումն Այսրկովկասում ներայացված է Ի. Շոպենի, Մ. Վելիլիի, Գ. Աղաեւի, Գ. Գեյբուլլաեւի եւ Ա. Ալեքբերովի ազգագրական հոդվածներում ու մենագրություններում<sup>11</sup>:

Արեւելյան Այսրկովկասի բնիկ ժողովուրդներից հայերի, իրանալեզու թաթերի եւ թալիշների, լեզգիների, ավարների եւ ավելի փոքրաթիվ այլ կովկասալեզու ժողովուրդների վիճակագրական եւ ազգագրական նկարագրության համար ուղենշային են եղել Բ. Միլլերի, Գ. Ստեփանյանի, Հ. Խառատյանի, Գ. Ասատրյանի, Ա. Հակոբյանի աշխատանքները<sup>12</sup>:

ԺԹ դարում Այսրկովկասում Ռուսական կայսրության վարած ազգային եւ վարչա-տարածքային քաղաքականությունը ներկայացնելու համար օգտվել

<sup>10</sup> **С.Г. Агаджанов**, Очерки истории огузов и туркмен Средней Азии IX-XIII вв., Ашхабад, 1969; **В.Ф. Минорский**, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963.

<sup>11</sup> **А. Бакиханов**, Гюлистан-Ирам, Баку, 1926; **И. Шопен**, Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПб., 1852; **Г.А. Гейбуллаев**, Топонимия Азербайджана (историко-этнографическое обозрение), Баку, 1986; **Г.Д. Агаев**, Данные этнотопонимии о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., – В сб.: “Этническая ономастика”, АН СССР, Институт этнографии им. Н.Н. Миклухо-Маклая, Москва, 1984, с. 143-153; **А. Алекперов**, У айрумов, Изд. общества обследования и изучения Азербайджана, № 5, Баку, 1928, с. 238-256; **А.К. Алекперов**, Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960; **М. Велили (Бахарлы)**, Этнография Азербайджана, – Сб.: Азербайджан и азербайджанцы в мире, № 2, Народы Азербайджана, Азербайджан, 2009; <http://ethnoglobus.az/>

<sup>12</sup> **Б. Миллер**, Таты, их расселение и говоры, Баку, 1929; **Գ. Ստեփանյան**, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն), Երեւան, 2010; **G. Stepanyan**, Armenians of Baku province in the second half of the 19<sup>th</sup> century, Yerevan, 2013; **Հ. Խառատեան**, «Աղրբեջանցիները», «կովկասալեզուները» եւ «իրանալեզուները». ինքնութեան զարգացումներն Աղրբեջանում, – Հանդէս Ամսօրեայ, Վիեննա-Երեւան, 2012, սն. 271-334; **Г. Асатрян**, Этническая композиция Ирана: От «Арийского простора» до Азербайджанского мифа, Ереван, 2012; Введение в историю и культуру талышского народа, Под редакцией **Г.С. Асатряна**, Ереван, 2011; **Ա. Հակոբյան**, Արեւելյան Այսրկովկասում հայկական եւ իրանական էթնոմշակութային ներդրումների շուրջ (Մի խմբի ձեւավորման օրինակով), – Մերձավոր Արեւելք, Երեւան, 2002, էջ 26-43; **Ա. Հակոբյան**, Թաթախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ (18-րդ դ. – 20-րդ դ. սկիզբ), – «Էջմիածին», 2002, սեպտեմբեր, էջ 70-83:



ենք Վ. Թունյանի՝ տվյալ հարցին նվիրված եւ մի քանի մասից բաղկացած համապարփակ աշխատությունից<sup>13</sup>: Յարիզմի ազգային քաղաքականության դրսեւորումներն օրյեկտիվորեն ներկայացված են նաեւ գերմանացի պատմաբան Յ. Բաբերովսկու աշխատանքներում<sup>14</sup>: Տվյալ հարցի լուսաբանման համար կիրառելի են եղել նաեւ խորհրդային եւ ռուս գիտնականներ Ա. Միլմանի, Վ. Դյակինի, Ն. Բոգդանովայի, Ն. Սմիրնովի, Ի. Բոչարնիկովի ուսումնասիրությունները<sup>15</sup>: Այսրովկասի մահմեդականների նկատմամբ ռուսական իշխանության քաղաքականությունը կայսրության ընդհանուր «մահմեդական խնդրի» համատեքստում դիտարկվել է արեւմտյան մի շարք հեղինակների հոդվածներում եւ մենագրություններում<sup>16</sup>:

Արեւելյան Այսրովկասի թյուրքալեզու գրավոր մշակույթի հիմնադիր Միրզա Ֆաթալի Ախունդովի գրական եւ հասարակական գործունեությունն ուսումնասիրելու տեսանկյունից արժեքավոր արխիվային նամակներ եւ հեղինակի ստեղծագործություններ է պարունակում 1953 թ. լույս տեսած Ախունդովի «Փիլիսոփայական մտքերի հատընտիր»-ը<sup>17</sup>: Կիրառական նշանակություն ունեն նաեւ հեղինակի վերաբերյալ ադրբեջանցի ուսումնասիրողների գիտական հոդվածների ժողովածոն եւ խորհրդային շրջանի տարբեր տարիներին լույս տեսած գրականագիտական ուսումնասիրությունները<sup>18</sup>:

Համանման արխիվային հավաքածոներ եւ ուսումնասիրություններ են լույս տեսել նաեւ թյուրքալեզու մամուլի հիմնադիր Հասան-բեկ Ջարդաբիի<sup>19</sup>, առաջին թյուրքալեզու գրական ողբերգության հեղինակ Նաջաֆ-բեկ Վեզիրովի<sup>20</sup>,

---

<sup>13</sup> **В.Г. Тунян**, Политика самодержавия России в Закавказье, ч. вторая (1826-1836 гг.), Ереван, 2006; ч. третья (1836-1844 гг.), Ереван, 2006; ч. четвертая (1845-1876 гг.), Ереван, 2007; ч. пятая (1877-1900 гг.), Ереван, 2008; ч. шестая (1900-1915 гг.), Ереван, 2010.

<sup>14</sup> **Й. Баберовски**, Враг есть везде: Сталинизм на Кавказе, Москва, 2010; **Й. Баберовски**, Цивилизаторская миссия и национализм в Закавказье: 1828-1914 гг., – Сб.: Новая имперская история постсоветского пространства, Казань, 2004, с. 307-353.

<sup>15</sup> **А. Мильман**, Политический строй Азербайджана в XIX – начале XX веков, Баку, 1966; **В.С. Дякин**, Национальный вопрос во внутренней политике царизма (XIX-XX вв.), СПб., 1998; **Н.Б. Богданова**, Колониальная политика Российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, Москва, 1937; **Н.А. Смирнов**, Политика России на Кавказе в XVI-XIX веках, Москва, 1958; **И.В. Бочарников**, Кавказская политика России в X-XX веках, Москва, 2013.

<sup>16</sup> **Е. Campbell**, The Muslim question in late imperial Russia, – Russian Empire: Space, people, power, 1700-1930, Indiana University press, 2007, p. 320-348; **R.D. Crews**, For prophet and tsar: Islam and empire in Russia and Central Asia, Harvard University press, 2006; **G. Hosking**, Empire and nation-building in late imperial Russia, – Russian nationalism: Past and present, New York, 1998, p. 19-35.

<sup>17</sup> **М.Ф. Ахундов**, Избранные философские произведения, Баку, АН Азерб. ССР, 1953.

<sup>18</sup> М.Ф. Ахундов: Мөгаләләр мәчмуәси, Баки, 1962; **Д. Джафаров**, М.Ф. Ахундов, Кратко-биографический очерк, Москва, 1962; **М. Рафили**, Мирза Фатали Ахундов, Баку, 1939; **Ш. Мамедов**, Мирза-Фатали Ахундов, Москва, 1978; **И. Тагиев**, Мирза Фатали Ахундов и новый тюркский алфавит, Культура и письменность востока, кн. вторая, Баку, 1928, с. 58-62.

<sup>19</sup> **Г.Б. Зардаби**, Избранные статьи и письма, Баку, 1962; **Н.Б. Зордаби**, Сечилмиш Өсөрлөри, Баки, 1960; Современники о Зардаби, Баку, 1985.

<sup>20</sup> **Н.Б. Везиров**, Избранные произведения, Баку, 1950; **N.B. Vəzirov**, Өsərлəri, Bakı, 2005.

թյուրքալեզու ռեալիստական պոեզիայի սկզբնավորող Սեիդ Ազիմ Շիրվանիի կենսագրության<sup>21</sup>, գրական եւ հրապարակախոսական գործունեության վերաբերյալ:

Ծանոթացել ենք նաեւ ադրբեջանցիների էթնոգենեզին վերաբերող՝ Ադրբեջանի ժամանակակից հեղինակների աշխատանքներին, որոնք, սակայն, նախ՝ խեղաթյուրում են Այսրկովկասի ամբողջ պատմությունը՝ հայերին ներկայացնելով իբրեւ եկվորներ ու գաղութարարներ, իսկ թյուրքերին՝ որպէս երկրամասի վաղնջական բնիկներ: Այնուհետեւ՝ ադրբեջանական ազգային ինքնության ձեւավորման «ուշացման» խնդիրները դիտարկում են ցանկացած ազգություն մերժող մահմեդական մշակույթի թելադրանքի (ումմայի գաղափարը) եւ «մահմեդական աշխարհի» օրինաչափությունների շրջանակներում եւ պատճառաբանում այն հանգամանքով, որ ազգային ինքնության երեւոյթը լայնորեն տարածում է գտել միայն Ֆրանսիական հեղափոխությունից հետո<sup>22</sup>:

Թյուրքախոս նոր մտավորականության վրա ԺԹ դ. վերջում նոր երեւոյթ դարձած պանթյուրքիզմի ազդեցությունը ներկայացրել ենք թեմայի վերաբերյալ առկա հարուստ եւ դասական համարվող գրականության հիման վրա: Օգտվել ենք Զարեանիի, Շահան Նաթալիի, Զ. Լանդաուի, Ա. Սվարանցի, Ֆ. Գորգոնի հիմնարար աշխատություններից, Զիյա Գյոքալիի գաղափարների վերաբերյալ բրիտանական եւ հայկական ուսումնասիրություններից<sup>23</sup>: Ռուսական կայսրությունում եւ մասնավորապէս Այսրկովկասում պանթյուրքիզմի պատմությունն ու հայտնի պանթյուրքիստներ Իսմայիլ Գասպրինսկու, Ալի-բեկ Հուսեյնզադեի եւ Ահմեդ-բեկ Աղաեփի գործունեությունը ներկայացված է Ա.Հ. Շիսսլերի, Յու. Օսմանովի, Ա. Թուրանի, Ա. Սիբգատուլլինայի կենսագրական ուսումնասիրություններում<sup>24</sup>:

Թյուրքալեզու մամուլի ձեւավորման պատմության, հայկական մամուլից օրինակ վերցնելու վերաբերյալ հետաքրքիր փաստեր ենք գտել հայ ուսումնասիր-

---

<sup>21</sup> **С.А. Ширвани**, Обращение к сыну, Баку, 1961; **Տ.Յ. Şirvani**, Həsən bey Məlikova, Seçilmiş əsərləri, 3 cildde, Bakı, 2005.

<sup>22</sup> Տե՛ս, օրինակ՝ **А. Балаев**, Азербайджанская нация: Основные этапы становления на рубеже XIX-XX вв., Москва, 2012; **Г.А. Гейбуллаев**, К этногенезу Азербайджанцев (историко-этнографическое исследование), Баку, 1991; История Азербайджана от древнейших времён до начала XX века, Под редакцией **И. Алиева**, Баку 1995.

<sup>23</sup> **Зареванд**, Турция и Пантуранизм, Париж, 1930; **Ш. Натали**, Пантюркизм от Анкары до Баку, Ереван, 2013; **J.M. Landau**, Pan-Turkism: From irredentism to cooperation, London, 1995; **F. Georgeon**, Türk milliyetçiliğinin kökenleri, Yusuf Akçura, İstanbul, 1999; **А. Сваранц**, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Москва, 2002; **Z. Gökalp**, The principles of Turkism, Leiden, 1968; **Ա. Սաֆարյան**, Զիյա Գյոքալիը եւ «Թյուրքականության հիմունքները», Երեւան, 2012:

<sup>24</sup> **А.Н. Shissler**, Between two empires, Ahmet Ağaoğlu and the new Turkey, London – New York, 2003; **Ю.Б. Османов**, Просветитель востока Исмаил Гаспринский, Симферополь, 2014; **А. Turan**, Əli bəy Hüseynzadə, Moskva, 2008.

րող, ակադ. Ծ. Աղայանի հոդվածում եւ հայկական «Մշակ», «Փորձ» եւ «Մուրճ» տպագիր պարբերականների մի քանի համարներում<sup>25</sup>: Դրանք ուշագրավ նյութ են պարունակում նաեւ նոր ծնվող թյուրքալեզու մամուլի վերաբերյալ հայ հասարության մեջ եղած ընկալման եւ ակնկալիքների մասին:

Ատենախոսության համար խիստ կարեւոր նյութեր են պարունակում Այսրկովկասի ռուսալեզու «Կասպիյ» եւ «Կավկազ» թերթերի առանձին համարները, որոնցում տեղ են գտել ԺԹ դ. վերջին թյուրքալեզու բնակչության եւ առաջին հերթին մտավորականության մոտ տեղի ունեցած ինքնության վերափոխումն ապացուցող հոդվածներ<sup>26</sup>: Երկրամասի թյուրքախոսների էթնիկ ինքնագիտակցության եւ առանձին էթնոս լինելու վերաբերյալ համանման հոդվածներ են լույս տեսել նաեւ թյուրքալեզու «Քեշքյուլ» թերթում:

Աշխատանքի տեսական հիմքը մի շարք ազգագրագետների եւ տեսաբանների արժեքավոր աշխատություններն են: Առանձնապէս օգտակար է եղել ակադ. Յու. Բրոնլեյի՝ էթնոսների ձեւավորման եւ էթնիկ գործընթացների վերաբերյալ համապարփակ աշխատությունը<sup>27</sup>: Արժեքավոր են եղել նաեւ Ս. Բրուկի, Ն. Չեքոքսարովի, Ա. Նալչաջյանի եւ Թ. Վարդանյանի ազգագրական աշխատանքները<sup>28</sup>: Կարեւորել ենք նաեւ ազգագոյացման եւ ազգայնականության վերաբերյալ արեւմտյան տեսաբան-պատմաբաններ Մ. Հրոխի եւ Բ. Անդերսոնի աշխատությունները<sup>29</sup>:

Մեր ուսումնասիրության խնդիրները ժամանաշրջանային առումով (ԺԹ դ. երկրորդ կես) ընդգրկող հայերեն մենագրություններ մինչ օրս չեն եղել: Որոշ չափով մեր արձարծած խնդիրներն ուսումնասիրված են հայ հեղինակ Թ. Վարդանյանի ռուսալեզու փոքրածավալ աշխատանքում, որը շոշափում է ադրբեջանցիների էթնոձեւավորման ամբողջ գործընթացը<sup>30</sup>:

<sup>25</sup> **Ս. Агаян**, К вопросу об издании азербайджанской газеты «Экинчи» и связи «Экинчи» с армянской периодической печатью, – «Տեղեկագիր» Հայկական ՍՍԻ ԳԱ, հ<sup>մ</sup> 11, 1950, էջ 51-65; «Մշակ», հ<sup>մ</sup> 8, Թիֆլիս, 1875; «Մշակ», հ<sup>մ</sup> 7, Թիֆլիս, 1876; «Փորձ», հ<sup>մ</sup> 4, Թիֆլիս, 1877; «Փորձ», հ<sup>մ</sup> 3, Թիֆլիս, 1877-1878; «Մուրճ», հ<sup>մ</sup> 11, Թիֆլիս, 1903:

<sup>26</sup> «Кавказ», № 90, Тифлис, 1882; «Каспий», № 93, Баку, 1891.

<sup>27</sup> **Ю.В. Бронлей**, Очерки теории этноса, Москва, 1983.

<sup>28</sup> **С.И. Брук**, **Н.Н. Чебоксаров**, Метаэтнические общности, – Расы и народы, Вып. 6, 1976, с. 15-42; **Ա. Նալչաջյան**, էթնիկական հոգեբանություն, Երեւան, 2001; **Т.Р. Варданян**, Язык как «жесткий» маркер этнической идентичности, – Общероссийская и национальная идентичность, Пятигорск, 2012, с. 155-161; **Թ. Ռ. Վարդանյան**, Ազգամիջյան հակամարտությունը որպէս էթնիկ ինքնության ձեւավորման գործոն (1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների օրինակով), – «Լրաբեր» հասարակական գիտությունների, հ<sup>մ</sup> 1, 2003, էջ 72-78:

<sup>29</sup> **М. Hroch**, How much does nation formation depend upon nationalism?, East European Politics and Societies, Vol. 4, № 1, 1989, p. 101-115; **М. Хрох**, От национальных движений к полностью сформировавшейся нации: процесс строительства наций в Европе, – Нация и национализм, Москва, 2002, с. 121-146; **Б. Андерсон**, Воображаемые сообщества, Москва, 2001.

<sup>30</sup> **Т. Варданян**, Азербайджанцы, История одного незавершённого этнопроекта, Москва, 2012.

Մեր ուսումնասիրության հետ սերտորեն առնչվում են արեւմտյան մի շարք հեղինակների աշխատություններ:

Լեհ կովկասագետ, պատմաբան Թադեուշ Սվետոխովսկին իր ծավալուն մենագրությունում եւ հոդվածում մանրամասն ներկայացրել է Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոսների պատմության 1905-1920 թթ. ժամանակաշրջանը<sup>31</sup>: Նա Արեւելյան Այսրկովկասի համար հետին թվով կիրառել է Ադրբեջան եզրույթը, ինչը մեզ համար անընդունելի է: Սակայն, Սվետոխովսկին, միաժամանակ, արժեքավոր նյութեր է ներկայացրել եւ եզրահանգումներ արել մեր ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ, որոնց հետ հիմնականում համամիտ ենք:

Ամերիկացի պատմաբան Օդրի Ալշտադտի ուսումնասիրությունը եւս իր առջեւ դրած հարցադրումներով առնչվում է մեր աշխատանքին<sup>32</sup>: Նրա մոտ էլ առկա է միտումը՝ երկրամասը կոչել արդի Ադրբեջան անունով: Ալշտադտը նույնպես շեշտը դրել է Ի դարի պատմական իրադարձությունների վրա, այնուամենայնիվ մեզ համար օգտակար փաստեր է շարադրել նաեւ ԺԹ դարի թյուրքախոս մտավորականության եւ թյուրքալեզու գրավոր մշակույթի մասին:

Որոշակի վերապահումներով ենք մոտեցել ամերիկա-խրայելական ծագումով ուսումնասիրող Բրենդա Շաֆֆերի աշխատությանը<sup>33</sup>: Հեղինակն առաջ է քաշել Արեւելյան Այսրկովկասի եւ Իրանի հյուսիս-արեւմուտքի թյուրքախոսների՝ միեւնույն ազգը լինելու գաղափարը եւ իր պատկերացրած «ադրբեջանական ինքնությունը» ներկայացրել որպես մարտահրավեր Իրանի համար: Ընդհանուր առմամբ աշխատանքը քաղաքական ենթատեքստ եւ քարոզչական բնույթ ունի: Դա թերեւս պայմանավորված է նաեւ հեղինակի՝ Ադրբեջանի իշխանության հետ ունեցած սերտ ֆինանսական կապերով, ինչը եւս մեզ ստիպել է զգուշավորություն ցուցաբերել նրա ուսումնասիրության նկատմամբ:

Արեւելյան Այսրկովկասում ինքնության վերափոխման տեսանկյունից օգտակար է եղել թուրքագետ Ադա Հոլլի Շիսսլերի մենագրությունը<sup>34</sup>: Հեղինակը Այսրկովկասի թյուրքախոս հանրույթի ներկայացուցիչ, հայտնի պանթյուրքիստ Ահմեդ-բեկ Աղաեփ կենսագրության եւ գործունեության օրինակով ներկայացրել է նաեւ ինքնության խնդիրը եւ իրանական ինքնագիտակցությունից անցումը թյուրքականի:

---

<sup>31</sup> **T. Swietochowski**, Russian Azerbaijan, 1905-1920: The shaping of a national identity in a Muslim community, Cambridge University press, 1985; **T. Swietochowski, B.C. Collins**, Historical dictionary of Azerbaijan, Scarecrowpress, 1999; **Т. Светоховский**, Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане, – Азербайджан и Россия: общество и государства, Вып. 4, Москва, 2001.

<sup>32</sup> **A. Alstadt**, The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule, Stanford, 1992.

<sup>33</sup> **B. Shaffer**, Borders and brethren: Iran and the challenge of Azerbaijani identity, Cambridge, 2002.

<sup>34</sup> **A.H. Shissler**, Between two empires: Ahmet Ağaoğlu and the new Turkey, London – New York, 2003.

Այսպիսով, բազմաթիվ աղքատների եւ փաստագրական նյութերի, ժԹ դարի, ինչպես նաեւ ժամանակակից ուսումնասիրությունների հիման վրա փորձել ենք վերլուծել եւ ներկայացնել ժԹ դ. երկրորդ կեսին ձեւավորված թյուրքալեզու գրավոր մշակույթի դերը Արեւելյան Այսրկովկասի մահմեդականների էթնոհամախմբման գործընթացում:

### **Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանվում են 8 ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործած աղբյուրների եւ գրականության ցանկից:

**Ներածությունում** ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հենքը, կիրառական նշանակությունը, ուսումնասիրության խնդիրների վերաբերյալ աղբյուրների եւ գրականության տեսությունը:

Առաջին գլուխը վերնագրված է **«ԱՐԵՒԵԼՅԱՆ ԱՅՐԿՈՎԿԱՍԻ ՄԱՀՄԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈՒՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԺԹ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ»**: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

**«Թյուրքական ծագմամբ բնակչության ներհոսքն Արեւելյան Այսրկովկաս»** վերնագրով առաջին ենթագլխում ներկայացված է ԺԱ-ԺԸ դարերում թյուրքական քոչվոր ցեղերի մուտքը Արեւելյան Այսրկովկաս, նրանց տարածքային տեղաբաշխումը եւ ազդեցությունը երկրամասի էթնիկական պատկերի վրա:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է **«Արեւելյան Այսրկովկասը Ռուսական կայսրության կազմում»**: Այս ենթագլխում ուսումնասիրված է ռուսական նվաճումից հետո ցարական վարչա-տարածքային քաղաքականությունը երկրամասում: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել ամբողջ ժԹ դարի ընթացքում ռուսական իշխանությունների իրականացրած ազգային քաղաքականությանը, դրա բազմավեկտոր միտումներին եւ թյուրքալեզու բնակչության համախմբման վրա ունեցած մեծ ազդեցությանը: Ներկայացված են ցարական վարչակազմի կրթա-մշակութային գործուն քայլերը, որոնց նպատակն էր Արեւելյան Այսրկովկասի մահմեդականներին նախ եւ առաջ կտրել Պարսկաստանի ավանդական ազդեցությունից:

**«Արեւելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնո-դավանական կազմը ժԹ դարի երկրորդ կեսին»** վերնագրով երրորդ ենթագլխում ուսումնասիրված է երկրամասում մեծամասնություն կազմող մահմեդական բնակչության էթնիկ կազմը: Ռուսական կայսրության պաշտոնական աղբյուրների հիման վրա ներկայացված են ժԹ դարի երկրորդ կեսի դրությամբ ինչպես եկվոր թյուրքալեզու բնակչության, այնպես էլ տեղաբնիկ կովկասալեզու եւ իրանալեզու ժողովուրդների քանակական տվյալները: Ցույց է տրվել, որ պաշտոնա-

կան մարդահամարներում եւ տվյալ ժամանակաշրջանի ռուս ազգագրագետների ուսումնասիրություններում Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոսների եւ նրանց լեզվի համար հաճախ առաջ էին քաշվում «ադրբեջանական թաթարներ», «ադրբեջաներեն» եւ նմանատիպ այլ արիեստական եզրույթներ, որոնք անշուշտ իրենց ադեցությունն էին ունենում թյուրքախոս հանրույթի ինքնագիտակցության վրա:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«ԺԹ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԹՅՈՒՐՔԵՐԵՆՈՎ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ԹՅՈՒՐՔԱԽՈՍ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ»**: Այն բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը կրում է **«Միրզա Ֆաթալի Ախունդովի գրական, լուսավորչական գործունեությունը եւ «մահմեդական» նոր այբուբենի նախագիծը»** վերնագիրը: Այստեղ ուսումնասիրվել է թարգմանիչ, գրող եւ ցարական պաշտոնյա Միրզա Ֆաթալի Ախունդովի դերը թյուրքերեն գրավոր լեզվի եւ գրականության ձեւավորման գործում: Տույց է տրվել, որ Ախունդովի գործունեության արդյունքում խարխլվել են պարսկերենի տիրապետող դիրքերը, իսկ նորահայտ գրական թյուրքերենը սկսել է աստիճանաբար գերակայել:

**«Թյուրքալեզու գրականության եւ նոր մտավորականության ձեւավորումը»** վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացվել է Ախունդովին հաջորդած թյուրքերենով ստեղծագործող եւ արդեն ռուսական միջավայրի ազդեցության տակ գտնվող մտավորականների գործունեությունը: Հենց այդ նոր մտավորականության մոտ է ձեւավորվել սեփական հանրույթը այլ էթնիկ խմբերից տարբերակելու ինքնագիտակցությունը՝ հիմնված նախ եւ առաջ թյուրքերեն լեզվի վրա: Նրա ներկայացուցիչները հիմնել են թյուրքալեզու կայուն գրականություն, մամուլ, որի միջոցով քարոզել են տվյալ ինքնագիտակցությունը:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է **«Պանթյուրքիզմի գաղափարախոսության ազդեցությունը Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթի ինքնագիտակցության ձեւավորման վրա»**: Աշխատանքի այս մասում ներկայացված է ԺԹ դ. վերջին Ռուսական կայսրությունում ծնունդ առած պանթյուրքիզմի գաղափարախոսությունը, որի առաջին կրողներից են եղել նաեւ Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոս մահմեդականները: Տույց է տրվել, թե ինչպիսի ազդեցություն է ունեցել պանթյուրքիզմի գաղափարը ոչ միայն բացահայտ պանթյուրքիստների, այլեւ ընդհանրապես թյուրքախոս մտավորականության ինքնագիտակցության ձեւավորման վրա:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է «**ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԹՅՈՒՐՔԱՆՈՍ ՆՈՐ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**» վերնագիրը:

«**Այսրկովկասում թյուրքալեզու մամուլի ձեւավորումը**» վերնագրով առաջին ենթագլխում ներկայացված է երկրամասի համար լիովին նոր երեսույթ դարձած թյուրքալեզու տպագիր մամուլի ձեւավորումը: Ուսումնասիրված է թյուրքալեզու պարբերականների դերը, հրապարակումների քաղաքական և գաղափարախոսական ուղղվածությունը թյուրքախոս նոր մտավորականության խոսույթի (դիսկուրսի) դիտանկյունից:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է «**Թյուրքախոսների էթնիկ ինքնագիտակցության վաղ դրսեւորումները Արեւելյան Այսրկովկասի թյուրքալեզու և ռուսալեզու մամուլում**»: Այս ենթագլխում խտացված են ԺԹ դ. վերջին երկրամասի տպագիր օրգաններում լույս տեսած այն հոդվածները, որոնցում թյուրքախոս մտավորականությունը մերժել է «մահմեդական» պարզունակ ինքնանունը և առաջ քաշել իր հանրույթի էթնիկ առանձին միավոր լինելու գաղափարը: Տվյալ հոդվածներում արտացոլված են բոլոր այն փոփոխությունները, որոնք թյուրքախոս էթնո-լեզվական հանրույթի և հատկապես նրա ընտրանու մոտ տեղի են ունեցել ԺԹ դարի ընթացքում: Մանրամասն վերլուծության են ենթարկվել մտավորականության մի հատվածի կողմից «ադրբեջանցի» արիեստական ինքնանվան (էթնոնիմ) քարոզչության դրդապատճառներն ու տվյալ ընտրության գործում պանթյուրքիստներից կրած ազդեցությունը:

**Եզրակացություն** բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները.

- ԺԹ դ. սկզբում Արեւելյան Այսրկովկասի անցումը ռուսական տիրապետության տակ բեկումնային ազդեցություն է ունեցել երկրամասի մահմեդական բնակչության կյանքում: Նախ, մտնելով Ռուսական կայսրության վարչատարածքային համակարգի մեջ՝ Արեւելյան Այսրկովկասը կտրվել է դարեր շարունակ Պարսկաստանի հետ ունեցած քաղաքական կապերից: Ցարական իշխանության վարած քաղաքականությունը նպաստել է մնացյալ իսլամական աշխարհից տեղի մահմեդականների նաեւ մշակութային, լեզվական և կրոնական որոշակի մեկուսացմանը: Պարսկերենը, որը մինչեւ ԺԹ դար հանդիսանում էր Արեւելյան Այսրկովկասում պաշտոնական գրագրության և գրականության հիմնական լեզուն, ռուսական իշխանությունների կողմից աստիճանաբար արգելվել է: Դրան զուգահեռ խրախուսվել է մինչ այդ տիրապետող խոսակցական լեզու եղած, սակայն գրավոր ձեւով գրեթե չկիրառված թյուրքերենի ամրապնդումն ու տարածումը: Վերոնշյալ փոփոխությունների հետեւանքով երկրամասի մահմեդականների շրջանում

տեղի է ունեցել կրոնական ինքնության տեղայնացում՝ Արեւելյան Այսրկովկասի սահմաններում:

- ԺԹ դ. երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասը ներկայացնում էր մահմեդական բնակչության մեծամասնությամբ, էթնիկապես խայտաբղետ տարածաշրջան: Մահմեդական թաթերի, թալիշների, լեզգիների, ավարների զգալի ներկայության պայմաններում մեծամասնություն էր կազմում թյուրքալեզու բնակչությունը: ԺԹ դ. երկրորդ կեսում երկրամասում առաջին անգամ անցկացված ռուսական պաշտոնական մարդահամարները ամրագրել են թյուրքախոսների քանակական գերակայությունը, ինչն անշուշտ ազդել է տվյալ հանրույթի գիտակցության վրա: Բացի այդ՝ մարդահամարներում ռուսների կողմից ժամանակ առ ժամանակ «ադրբեջաներեն» եւ «ադրբեջանական թաթարներ» արիեստական եզրույթների կիրառումը նպաստել է երկրամասի համար խորթ տվյալ անվանումների շրջանառության մեջ մտնելուն:

- 1850-60-ական թթ. Միրզա Ֆաթալի Ախունդովի գրական եւ հասարակական գործունեությունը դրել է Արեւելյան Այսրկովկասում թյուրքերեն գրական լեզվի եւ գրականության հիմքերը: Ախունդովի կերպարն ինքնին իր մեջ խտացված կերպով ներկայացնում էր ԺԹ դարի սկզբից Արեւելյան Այսրկովկասում տեղ գտած փոփոխությունների ազդեցությունը: Ըստ էության, նա միաժամանակ եւ՝ ռուսական մտածելակերպով առաջնորդվող նոր տիպի մահմեդական մտավորական էր, եւ՝ աստիճանաբար թուլացող պարսկական մշակույթի ազդեցության կրող: Նման երկվության պայմաններում մեծապես Ախունդովի ջանքերով ստեղծվել է նոր թյուրքալեզու գրավոր մշակույթ, որը դուրս է մղել նախկինում արմատացած պարսկալեզվության ավանդույթները:

- ԺԹ դարի վերջին չորս տասնամյակների ընթացքում աստիճանաբար հանրայնացող թյուրքերենով գրվել են տպագիր գրական երկեր՝ դրամաներ, կատակերգություններ, բանաստեղծություններ, ինչպես նաեւ հրապարակախոսական հոդվածներ: Արեւելյան Այսրկովկասի համար լիովին նոր երեսույթ էր թյուրքալեզու մամուլի ի հայտ գալը: Թյուրքերենով գրականությունն ու մամուլը ստեղծվում էր թյուրքալեզու նոր սերնդի մտավորականության կողմից, որի շրջանում աստիճանաբար ձեւավորվում էր եւ դարավերջին ի հայտ եկավ էթնիկ ինքնագիտակցություն՝ հիմնված թյուրքերեն լեզվի եւ թյուրքական ծագման գաղափարի վրա: ԺԹ դարի վերջի այս մտավորականությունը թյուրքախոս հանրույթի միակ շերտն էր, որի մոտ ձեւավորվել էր էթնիկ ինքնություն:

- Էթնիկ ինքնությամբ օժտված թյուրքալեզու մտավորականության շրջանում միասնական էնդոէթնոնիմ չկար: Առավել հաճախ հանդիպում էր «մահմեդական» կոնֆեսիոնիմը, սակայն նրա տակ արդեն ենթադրվում էր Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը: Թյուրքախոսների ինքնության փնտրտուքի վրա էական ազդեցություն է գործել 1880-ական թվականներին Ռուսական



կայսրությունում ծնունդ առած պանթյուրքիզմի գաղափարախոսությունը: Տվյալ ազդեցության արդյունքում պանթյուրքիզմի կողմնակից մի խումբ մտավորականների մոտ դարավերջին ծնվել էր Արեւելյան Այսրկովկասն «Ադրբեջան» անունով, իսկ նրա թյուրքախոս բնակչությանը՝ «ադրբեջանցի» կոչելու գաղափարը:

- Արեւելյան Այսրկովկասի թյուրքախոս հանրույթը ԺԹ դ. վերջին ընդհանուր առմամբ որպես լիարժեք էթնոս դեռ չէր ձեւավորվել: Այն իրենից ներկայացնում էր համախմբման միջանկյալ փուլում գտնվող էթնո-սոցիալական հանրույթ, որը նկարագրելու համար նպատակահարմար ենք գտել կիրառել ազգագրական գիտության կողմից առաջարկված մետաէթնո-լեզվական հանրույթ եզրույթը:

- ԺԹ դ. երկրորդ կեսը հանդիսացել է թյուրքախոս մետաէթնո-լեզվական հանրույթի էթնոհամախմբման (էթնոձուլախառնման-էթնոմիքսացիայի) եւ ժամանակակից ադրբեջանցի էթնոսի ձեւավորման առաջին՝ սկզբնական փուլը, որը հող է նախապատրաստել եւ վճռորոշ նշանակություն ունեցել հետագա փուլերի համար: 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումներով սկսվել է թյուրքախոս մետաէթնո-լեզվական հանրույթի էթնոհամախմբման կամ այլ կերպ ասած՝ ժամանակակից ադրբեջանցի էթնոսի ձեւավորման երկրորդ փուլը: Այն անմիջապես հաջորդել է մեր աշխատանքի խնդրո առարկա ժամանակաշրջանին եւ տեւել մինչեւ 1918 թվականին Ադրբեջան անունով պետության հիմնումը, երբ ի հայտ են եկել ազգի ձեւավորման համար անհրաժեշտ կենսատարածք եւ սեփական իշխող դաս:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. The Muslim population of Eastern Transcaucasia in the second half of the 19<sup>th</sup> century (demographic analysis), – *Բանբեր հայագիտության*, 2016, հ<sup>մ</sup> 3, էջ 53-67:
2. Արեւելյան Այսրկովկասի թյուրքական ցեղերը ԺԹ դարում, – «*Գարդմանի եւ Շիրվանի հայության պատմա-մշակութային ավանդները (պատմություն եւ արդիականություն)*», Հանրապետական գիտաժողով, Երեւան, 2016, էջ 33-59:
3. Թյուրքախոսների էթնիկ ինքնագիտակցության վաղ դրսետրումները 19-րդ դարավերջի Արեւելյան Այսրկովկասի թյուրքալեզու եւ ռուսալեզու մամուլում, – «*Վէմ*» *համահայկական հանդես*, 2017, հ<sup>մ</sup> 1, էջ 193-206:
4. Արեւելյան Այսրկովկասում թյուրքալեզու գրավոր մշակույթի ծեւավորումը 19-րդ դարի երկրորդ կեսին, – *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2017, հ<sup>մ</sup> 1, էջ 103-112:

**ГАЛСТЯН ВАРДАН АНДРАНИКОВИЧ**  
**РОЛЬ ФОРМИРОВАНИЯ ТЮРКОЯЗЫЧНОЙ ПИСЬМЕННОЙ КУЛЬТУРЫ ВО**  
**ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА В ПРОЦЕССЕ ЭТНОКОНСОЛИДАЦИИ**  
**МУСУЛЬМАНСКОГО НАСЕЛЕНИЯ ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ**

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – «Всемирная история, международные отношения».

Защита состоится 13 июня, 2017 г., в 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история, международные отношения», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

**РЕЗЮМЕ**

Диссертация посвящена изучению роли формирования тюркоязычной письменной культуры во второй половине XIX века в процессе этноконсолидации мусульманского населения Восточного Закавказья. Научное исследование темы имеет важное значение для изучения истории формирования современной азербайджанской нации. Актуальность темы диссертации обусловлена противоречивыми теориями в советской и откровенными фальсификациями в современной азербайджанской историографии по вопросу о времени формирования азербайджанского этноса. Вышеуказанные теории имеют цель представить современный азербайджанский народ древним и полностью сформировавшимся ещё в XIII-XIV веках, а тюркский элемент представить как автохтонный.

Цель нашего исследования изучить влияние образовавшейся во второй половине XIX тюркоязычной литературы и прессы на самосознание мусульман Восточного Закавказья.

Главным научным заключением диссертации является тезис о том, что вторая половина XIX века явилась начальным или первым этапом формирования азербайджанской нации. Именно в конце XIX века под воздействием произошедших изменений, началась этноконсолидация тюркоязычного населения, а в среде интеллигенции сформировалось новое этническое самосознание.

Диссертация состоит из введения, трёх глав, которые делятся на восемь подглав, заключения и списка использованных источников и литературы.

Во **введении** представлены актуальность темы, а также цели и задачи, научная новизна, хронологические рамки, методологическая основа и практическое значение исследования, краткий обзор источников и литературы.

Первая глава озаглавлена **«ЭТНО-ПОЛИТИЧЕСКАЯ КАРТИНА МУСУЛЬМАНСКОГО НАСЕЛЕНИЯ ВОСТОЧНОГО ЗАКАВКАЗЬЯ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА»** и состоит из четырёх подглав. Первая подглава, озаглавленная **«Приток населения тюркского происхождения в Восточное Закавказье»**, представляет процесс притока тюркских племён в регион с XI по XVIII века и их рас-

селение. Вторая подглава озаглавлена *«Восточное Закавказье в составе Российской империи»*. В ней представлена административная и национальная политика царизма, целью которой было, прежде всего, устранение персидского традиционного влияния. В третьей подглаве, озаглавленной *«Этно-конфессиональный состав мусульманского населения Восточного Закавказья во второй половине XIX века»*, приводятся статистические данные разных этнических групп мусульманского населения. Особое внимание уделено фактам употребления в переписях русскими чиновниками искусственных для региона терминов “Азербайджанский язык” и “Азербайджанские татары” для обозначения тюркоязычного населения и его языка.

Вторая глава озаглавлена *«ФОРМИРОВАНИЕ ПИСЬМЕННОЙ КУЛЬТУРЫ НА ТЮРКСКОМ И СТАНОВЛЕНИЕ ТЮРКОЯЗЫЧНОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА»* и состоит из трёх подглав. В первой подглаве (*«Литературная, просветительская деятельность Мирзы Фатали Ахундова и проект нового «мусульманского» алфавита»*) проанализирована деятельность основателя литературного тюркского языка. Представлена роль Ахундова в ликвидации персидского языкового и культурного влияния, замене персидского письменного языка тюркским. Вторая подглава озаглавлена *«Формирование тюркоязычной литературы и новой интеллигенции»*. В ней представлена литературная и общественная деятельность основных деятелей новой тюркоязычной интеллигенции, их политические взгляды и конструирование своего этнического самосознания вокруг тюркского языка. Третья подглава (*«Влияние идеологии пантюркизма на самосознание тюркоязычной общности Восточного Закавказья»*) посвящена новой идеологии в среде тюркоязычных народов Российской империи и деятельности видных закавказских пантюркистов.

Третья глава диссертации озаглавлена *«ВОПРОС ЭТНИЧЕСКОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ В ДИСКУРСЕ НОВОЙ ТЮРКОЯЗЫЧНОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ»* и состоит из двух подглав. Первая подглава носит название *«Формирование тюркоязычной прессы в Закавказье»*. В ней изложена деятельность первых тюркоязычных газет, существовавших в период с 1875 по 1891 годы. Представлены содержания газет, роль в утверждении и развитии литературного тюркского языка, идейные приоритеты основателей печатных органов. Вторая подглава озаглавлена *«Ранние проявления этнического самосознания тюркоязычной общности в тюркоязычной и русскоязычной прессе Восточного Закавказья»* и содержит анализ статей, которые представляют большой и ключевой интерес для нашей работы. В них представители тюркоязычной интеллигенции впервые подняли вопрос этнической принадлежности своей общности. Эти статьи являются наглядным примером тех изменений и внешних воздействий, которые повлияли на самосознание тюркоязычных мусульман региона на протяжении всего XIX века.

В *заклучении* обобщены основные выводы, полученные в ходе подготовки диссертации.

VARDAN A. GALSTYAN

THE ROLE OF THE FORMATION OF TURKIC LITERARY CULTURE IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY IN THE PROCESS OF THE ETHNIC CONSOLIDATION OF THE MUSLIM POPULATION OF THE EASTERN TRANSCAUCASIA

The defense of dissertation will take place at 15:00, on 13 of June of 2017, at the meeting of the Specialized council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02.

SUMMARY

The dissertation is a historical research into the role of the formation of the Turkic literary culture in the second half of the XIX century in the process of ethnic consolidation of the Muslim population of the Eastern Transcaucasia. The theme of research has an important scientific significance for study of the history of formation of the modern Azerbaijani nation. The actuality of the topic is stipulated by the contradictory theories of Soviet and obvious falsifications of modern Azerbaijani historiographies about the question of the period when the Azerbaijani nation was formed. The goals of such theories are to present the modern Azerbaijani nation as an ancient one and completely formed in the XIII-XIV centuries, to present Turkic element as autochthonic.

The main aim of our research is to study the influence of the XIX century formed Turkic literature and press on the ethnic identity of Muslims of the Eastern Transcaucasia.

The main scientific conclusion of the dissertation is the thesis that the second half of the XIX century was the initial or first phase of the formation of the modern Azerbaijani nation. It is in the end of the XIX century when under the influence of the changes the ethnic consolidation of Turkic speaking population began and the ethnic identity was formed among its intellectuals.

The research comprises introduction, three chapters consisting of eight sub-chapters, conclusion and bibliography.

The *introduction* covers the actuality of the topic, also the goals and objectives, scientific novelty, chronological framework, methodological basis and practical significance of the research, summary theory of the sources and literature concerning the issue.

The first chapter is entitled «*ETHNO-POLITICAL PICTURE OF THE MUSLIM POPULATION OF THE EASTERN TRANSCAUCASIA IN THE SECOND HALF OF THE XIX CENTURY*» and consists of three subchapters. The first subchapter is entitled «*Inflow of the population of Turkic origin to the Eastern Transcaucasia*». It covers the process of inflow of the Turkic tribes and their settlement in the region from XI to XVIII centuries.

The second subchapter is entitled *«The Eastern Transcaucasia as a part of the Russian Empire»*. In the second subchapter the Russian administrative and national politics in the region are researched. The main goal of those politics was the elimination of the traditional Persian influence. The statistic data of different Muslim ethnic groups is given in the third subchapter entitled *«Ethno-confessional structure of the Muslim population of the Eastern Transcaucasia in the second half of the XIX century»*. Special attention is paid on using the artificial terms for the region, such as “Azerbaijani language” or “Azerbaijani Tatars” by the Russian officials to describe the Turkic speaking population and their language.

The second chapter is entitled *«THE FORMATION OF THE LITERARY CULTURE IN TURKIC LANGUAGE AND TURKIC SPEAKING INTELLIGENTSIA IN THE SECOND HALF THE XIX CENTURY»* and consists of three subchapters. The first subtitle is entitled *«Literal and enlightening activity of Mirza Fatali Akhundov and the project of the new “Islamic” alphabet»*. It analyses the activity of the founder of the literary Turkic language and covers the Akhundov’s role in the elimination of the Persian linguistic and cultural influence as well as his role in the replacement of the literary Persian language by Turkic. The second subchapter is entitled *«The formation of the literature in Turkic language and the new intelligentsia»*. In this part of research the literal and public activity of the most famous Turkic speaking intellectuals is studied. This subchapter also covers their political views and construction of their ethnic identity around the Turkic language. The third subchapter covers the new ideology among the Turkic speaking groups of the Russian Empire and the activity of notable Transcaucasian panturkists. This subchapter is entitled *«The influence of the ideology of Panturkism on the identity of the Turkic speaking population of the Eastern Transcaucasia»*.

The third chapter of the dissertation is entitled *«THE QUESTION OF THE ETHNIC BELONGING IN THE DISCOURSE OF THE NEW TURKIC SPEAKING INTELLIGENTSIA»*. The first subchapter is entitled *«The formation of the press in Turkic language in the Transcaucasia»*. This part covers the activity of the first papers in Turkic existed from 1875 to 1891. The content of those papers, their role in the strengthening and developing of the Turkic language, as well as the ideological priorities of their founders are studied in the first subchapter. The second subchapter is entitled *«The early demonstrations of the ethnic identity of the Turkic speaking people in the Turkic and Russian press of the Eastern Transcaucasia»*. This part contains articles which are significantly important for our research. In those articles the representatives of the newly formed Turkic speaking intelligentsia raised the question of the ethnic belonging of their people for the first time. Those articles are obvious cases of those changes and outer impacts that influenced on the identity of Turkic speaking Muslims of this region through the whole XIX century.

In the conclusion the main results of the thesis are summarized.